ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ԷՄԱՆՈՒԵԼ ԱՐԶՈՒՄԱՆԻ ՊԻՎԱԶՅԱՆ

Հայ բանասիրության վերջերս ունեցած կորուստների թվին ավելացավ ևս մեկը. 1995 թ. մարտի 27-ին վախճանվեց միջնադարագետներին լավածանոթ հայագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, Երևանի համալսարանի պրոֆեսոր Էմանուել Արզումանի Պիվազյանը։ Տեսողության աստիճանական նվազումը, ապա նաև վերահաս հիվանդությունը շուրջ երկու տարի արդեն նրան զրկել էին հայագիտության առանձին խնդիրներին գործնականորեն միջամտելու, քննարկումներին ու բանավեճերին մասնակցելու, ինչպես նաև հայագիտական նորագույն հրատարակություններին գրավոր կամ բանավոր անմիջապես ու պահանջկոտ արձագանքելու հնարավորությունից։

Էմ. Պիվազյանը ծնվել է Նոր Բայազետում 1920 թ.։ 1937 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ, ունկնդրել համալսարանում դասախոսող հայագիտության հեղինակություններին, հմտացել գիտական պրպտումներ կատարելու մարզում, ավարտելուց հետո մի քանի տարի ուսուցչությամբ պարապել, ապա՝ 1947-ին ընդունվել է ասպիրանտուրա՝ հայոց հին և միջնադարյան դրականության մեջ մասնագիտանալու ի դեպ, ուսանելու տարիներին արդեն նա ապացուցել էր մատենագրությամբ զբաղվելու իր կարողությունն ու նվիրումը. 1941 թ. «Ուսանողական գիտական աշխատությունների ժողովածուում» (№ 3, էջ 163—196) տպագրվել էր նրա անդրանիկ հետազոտությունը՝ «Վահագնի, Արտավազդի, Տորքի առասպելները և նրանց դրական մշակումները»։ Քսանմեկ տարեկան երիտասարդի համար սա, անշուշտ, խոսուն վկայություն էր, թե հետաքրքրությունների զարգացումը ինչ հանգրվանի պիտի բերի։ Եվ հիրավի, թեկնածուական դիսերտացիայի թեմա ընտրվեց Մխիթար Գոշի գրական ժառանգության քիչ ուսումնասիրված և գիտական հրատարակության կարոտ մասը՝ առակները։

Էմ. Պիվազյանը իր գլխավոր խնդիրներից մեկը համարեց Գոշի անունով հայտնի առակների գիտական բնագրի կազմումը, որ և կատարեց պատշաճ հմտությամբ ու բարեխղճությամբ։ Նա միմյանց հետ համեմատել է ութ ձեռագիր ընդօրինակություն (Հ ն ա գ ո ւ յ ն ը՝ 1283 թ.), խմբավորել ըստ տեսակի (առասպելական, բարոյական, ստեղծական), օժտել այլընթերցումներով, կցել առարկայական ցանկ և հրատարակել որպես «Գրական հուշարձաններ» մատենաշարի անդրանիկ հատոր (Երևան, 1951)։ Վստահաբար կարելի է ասել, որ Մխիթար Գոշի առակների հրատարակությամբ հիմք դրվեց եռապատերազմյան տարիներին միջնադարյան դրական հուշարձանների գիտական հրատարակմանը։ Եվ իրոք, այդ գրքին հաջորդեցին տաղերգուներին նվիրված հատորները, որոնցից մեկի՝ Հովհաննես Թլկուրանցու աշխատասիրողը դարձյալ Էմ. Պիվազյանն է (Երևան, 1960)։ Բնաղբեր ուսումնասիրելու մեկ տասնամյա փորձը զգացվում է Թլկուրանցու տաղերի հրատարակության թե՛ հետազոտական, թե՛ տեքստերի հրապարակման բաժիններում։ Շարադրանքը առավել ամփոփ է ու զգուշավոր, չկան անհարկի ընդհանրացման փորձեր, իսկ «Ծանոթություններ և բանասիրական դիտողություններ» հատվածում արծարծված են մատենագիտական-աղբյուրագիտական բնույթի բազմաթիվ խնդիրներ։

Էմ. Պիվազյանի կիրառած գիտական մոտեցումներն ու համոզումները հստակորեն շարադրված են նաև բնագրական աշխատանքներին վերաբերող նրա պահանջկոտ ու շիտակ գրախոսություններում։ Այսպես, նա գտնում էր, որ հետազոտողը չպիտի տարվի ուսումնասիրվող թեմայով այնքան, որ խանգարվի անաչառ մոտեցումն ու գնահատումը (ՊԲՀ, 1959, № 1, էջ 256) և ապա՝ «Անցյալի ժառանգությունը ուսումնասիրելիս պետք է նկատի ունենալ, որ ամեն ինչ չէ արժեքավոր ու կարևոր։ Կան նաև սակավարժեք գործեր ու գործիչներ, որոնք չպետք է գնահատվեն իրենց իրական արժեքից բարձր, հակառակ դեպքում աղավաղվում է մեր կուլտուրայի ու գրականության զարգացման ընթացքի պատկերը» (Ն. տ., էջ 262—263)։ Եվ եթե տեսնում էր նման խաթարում-

ներ՝ ասում էր բաց ու անվարան։ Մասնավորապես, գնահատության ու բնագատության ամփոփիչ խոսք է հանդուցյալի «Դիտողություններ «Միջնադարյան տաղերգուներ» գիտական մատենաշարի մասին» ձեռնարկային կիրառություն ունեցող դրախոսությունը («Բանբեր Երևանի համալսարանի», 1968, № 2, էջ 239—254)։

Հայոց լեզվի պատմության, ինչպես նաև ձեռագրագիտության ու հնագրության մարզերում ունեցած իր պատշաճ պատրաստությունը հնարավորություն էր տալիս խոսք ասելու միջնադարագիտության շատ բնագավառներում։ Բնավ պատահական չէ, որ նա առաջիններից մեկը արձագանքեց Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» հետ կապված «պատմա-բանասիրական» հորինումներին, Ա. Գրքի և այդ հուշարձանի բնագրական հարաբերություններին։ Եվ էմ. Պիվազյանի հրապարակային ելույթը էքսպրոմտ չէր, այլ տևական ու խղճմիտ պրոպրտումի արդյունք, որ ամփոփվելու էր տարիներ անց՝ «Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» բանասիրական քննություն» գրքում (1987 թ.)։ Այդ ոչ շատ ծավալուն մենագրությունը լուծում է սկզբունքային կարևորություն ունեցող հարց՝ ինչպիսի՞ն է «Դատաստանագրքի» խմբագրությունների ժամանակագրական հարաբերությունը, հետևաբար և՝ հեղինակային բնագրի հարցը։

Պրոֆ. էմ. Պիվազյանը իր գիտական գործունեության տարիներին առանձնակի հմտություն ու նվիրում էր ցուցաբերում խմբագրական աշխատանքի վերաբերմամբ։ Մոռանալու չէ, որ նրա և Հ. Անասյանի խմբագրությամբ են լույս տեսել Վ. Հակոբյանի կազմած «Կանոնագիրք հայոց» երկու ծավալուն հատորները, նա էր համալսարա՛ի հայագիտական կենտրոնի հրատարակությունների նախաձեռնողներից մեկն ու սրտացավ խմբագիրը, Ա. Ղանալանյանի «Հայ դրականությունը և բանահյուսությունը» դրքի խմբագրող-ծանոթագրողը։ Թվարկումը կարելի է շարունակել։

Էմ. Պիվազյանը «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրական կոլեգիայի անդամ էր, խմբագրության աշխատակից և տարիներ շարունակ իր կարողությունները գործի էր դնում հայագիտական այդ հրատարակության գիտական նվաճումները մեկ համարից մյուսը փոխանցելու համար։

Վ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ